



# ԲԱԶՄԱՎԷՊ

Զ. ՏԱՐԻ. ԹԻՒ 19.

1848

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՀՈՒԲԱՐՏՈՍ ԲԱՐԵՄԻՏ

համ

Փոռնաշան և խելացի րնդեսուրիան :

Ա վերնագրովս՝ Ֆրանգլին Մերի կացուց և մարդկութեան անմահ պարծանքը՝ խելացի և օգտակար խրատներ կ'ընծայէ անոնց, որ շատ անգամ իրենց բաները ջանքով և լաւ չկարգաւորելով՝ կը սկսին ժամանակին կամ տէրութեան վրայ գանգրտիլ : Ինքը իր ստոյգ և արթնցրնող առածները կը դնէ Բարեմիտ հոբարտտի մը բերան, և ուրիշ ծերու մը բերնով զուրցընել կուտայ :

« ()ը մը, կ'ըսէ, վաճառանոցի մը մէջ բազմութիւն մարդկան ժողվուած դեռ ծախելու ժամանակը եկած չըլլալով՝ կեցեր մէկմէկու հետ կը խօսէին ժամանակին նեղութիւնը վրայ : Մէջերնէն մէկը՝ վայելուց հագուստով ու կերպարանքով

ճերմակ մօրուքով ծերու մը քով գնաց ու հարցուց . « Հայր Յակոբ, հրամանքդ ինչ կը մտածես աս ժամանակին վրայ, ինչ կ'ըսես, աս ծանր տուրքերով՝ բաներնիս ո՞ր պիտի երթայ . ինչպէս պիտի կարենանք այսչափ բան վճարել : Եւ այնք մեզի ինչ խորհուրդ կուտաս » :

Հայր Յակոբը ոտք ելաւ ու ըսաւ . « Ի՞նչ որ կ'ուզէք իմ խորհրդիս մտիկ ընել, քիչ խօսքով կ'ըրեմ ձեզի ինչ որ ինձի լաւ կ'երևնայ . վասն զի « Խելացի մարդուն համար մէկ խօսք բաւական է, և երկայն խօսքը մարդուս փորը չի կըլտացընէր », կ'ըսէ հոբարտտ Բարեմիտն » : Հոն բոլոր գտնուողները ծերուն գլուխը ժողվուեցան, ու պղպտակով

որ սկսած խրատը առաջ տանի : Արբոր չորս կողմն առեր էին՝ Հայր Յակոբ սկսաւ խօսիլ այսպէս .

« Բարեկամք և մերձաւորք իմ, իրաւ է որ տուրքերնիս ծանր է , բայց թէ որ վճարելիքնիս միայն աս տերութեան վրանիս դրածը ըլլար , ճարը դիւրին էր . բայց մեր մէջէն ոմանք անկէց 'ի զատ ուրիշ հարկեր ալ ունին վճարելու , և աւելի ծանր : Մենք անոր կրկինը կը վճարենք մեր ծուլութեանը , երեքկինը՝ հպարտութեան , չորեքկինը՝ յիմարութեան : Այլ ասոնք այնպէս ստիպող տուրքեր են , որ տերութեան պաշտօնեաներն ալ չեն կրնար թեթեւցընել կամ պակսեցընել : Բայց մենք մտիկ ընենք աս բարի խրատիս . անոր ալ դարման մը կրնայ ըլլալ . « Դունք քեզի օգնէ , որ Աստուած ալ քեզի օգնէ » , կ'ըսէ իր օրագրութեանը մէջ Հռիփարտոս Բարեմիսն : Տերութիւնը իր պիտոյիցը համար մեզմէ մեր ժամանակին տասնին մէկը պահանջելուն համար՝ խիստ կ'երևնայ . բայց ծուլութիւնը մեզմէ շատերնէս անկէց ալ աւելին կ'առնէ , թէ որ մէյմը հաշիւ ընելով տեսնենք այն ծախքերը որ դատարկութեան կամ անգործութե ծախքեր ենք , կամ այն վնասները որ փոճքաներու կամ անպտուղ զբօսանքներու տակ է ըլլալով ըրեր ենք : Վատարկութիւնը՝ հիւանդութեանց մեծ պատճառն ըլլալով՝ ահա յայտնի կերպով կը փձացընէ մարդուս կեանքը : « Աշխատութենէն աւելի դատարկութիւնը ժանկի պէս շուտ կը մաշեցընէ մարդուս կեանքը , կ'ըսէ Հռիփարտոս Բարեմիսն . ուր ընդ հակառակն ստեպ գործածուող բանալին միշտ փայլուն կը մնայ » . ուստի « թէ որ կեանքդ կը սիրես , կ'ըսէ , ժամանակդ մի մաշեցընէր անօգուտ տեղ . վասն զի մարդուս կեանքը ժամանակով բանած կերպաս մըն է » : Ուրեմն չըլլայ որ քնով ալ պէտք եղածէն աւելի ծախքեր ժամանակնիս մտունիս բերենք Հռիփարտոսին ըսածը . « Այլուր քուն եղած ժամանակը հաւ չկրնար որսալ » . և թէ « Հողուն

տակ պառկելու շատ ժամանակ պիտի ունենանք » : « Թէ որ քան զամենայն բան յարգի է ժամանակը , ուրեմն ժամանակ կորսնցընելն դէշ է քան զամէն տեսակ շռայլութիւն » , կ'ըսէ Հռիփարտոս Բարեմիսն . որ կ'ըսէ դարձեալ թէ « Արսուած ժամանակը մէյմըն ալ ձեռք չգար » : Այլ մեզի կարծուած բաւական ժամանակը , իրօք խիստ քիչ է : Ուրեմն ոտքի վրայ ու գործքի ետեւէ ըլլանք միշտ , և օգտակար գործքի : Թէ որ ջանք ունենանք , քիչ դժուարութեամբ շատ բան կը տեսնենք : Վասն զի « Ծուլութիւնն է ամէն բան դժուարացընող , իսկ աշխատութիւնը դիւրացընող » , կ'ըսէ Հռիփարտոս Բարեմիսն : Քնէն ուշ ելողը , բոլոր իր օրը տարտամութեամբ կ'անցընէ , և ինչուան գիշեր՝ թէ որ գործքը գլուխ հանէ՝ հրաշք սեպելու է : « Ծուլութիւնը այնպէս դանդաղ կը քալէ , որ աղքատութիւնը շուտ մը վրան կը հասնի » , կ'ըսէ Հռիփարտոս Բարեմիսն : « Այլ որ դուն գործքդ քչես առաջ տանիս , չըլլայ որ գործքը զքեզ քչէ » . ու թէ , « Իրիկունը շուտ պառկիլ , առտուն շուտ արթննալը՝ առողջ , հարուստ ու իմաստուն կ'ընէ զմարդ » :

Այլ ժամանակի ցանկալ սպասելին ըսել է . ժամանակը կը լաւցընէ ով որ օգտակար կերպով զայն կը գործածէ : Վասն զի « Աշխատութիւնը բանի փափաքել չգիտեր » , կ'ըսէ Հռիփարտոս Բարեմիսն : « Ով որ յուսով կ'ապրի , անօթութենէ կը մեռնի » : Առանց դժուարութեան մարդ չկրնար բան մը փաստրկիլ , ինծի օգնական՝ իմ ձեռքերս ըլլան , վասն զի ես կալուածք չունիմ . ունիմ ալ նէ , վրանին տուրք գրուած է : Այլ Հռիփարտոս Բարեմիսն ըսածին պէս , « Ով որ գործարան մը ունի , կալուածք մը ունի . ով որ արհեստ մը՝ պատուաւոր ու շահաւոր պաշտօն մը ունի » : Սակայն թէ որ գործարան է՝ աշխատութիւն կ'ուզէ , թէ արհեստ՝ ջանք կ'ուզէ . առանց ասոնց երկիր ալ ունենանք , արուեստ ալ ունենանք և ոչ տուրքը հանելու չափ

կարողութիւն կ'ունենանք : թէ որ մենք աշխատասէր ըլլանք , սովէ մեռնիլը մեզմէ հեռու կը մնայ . վասն զի ինչպէս կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն « Լնօթութիւնը աշխատասէր մարդուն տանը դռնէն կը նայի , բայց ներս մտնել չհամարձակիր » : Ոչ տէրութեան սպասաւոր , ոչ հարկապահանջ աշխատասիրին տունը ոտք չեն կոխեր . վասն զի « Լշխատութիւնը պարտքեր կը վճարէ , տատամութիւնը կ'աւելցնէ զանոնք » , կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն : Ի՛նչ փոյթ է քեզի թէ որ ոչ գանձ գտեր ես , և ոչ ալ աղգականներէդ ժառանգութի՛ առեր ես , « Ենող ամենայն բարութեանց գործունէութիւնն է » , կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն . և աշխատութեան՝ ամէն բան կուտայ Լստուած : « Լշխատ ուրեմն ծոյլերուն քուն եղած ժամանակը , որ թէ ծախելու և թէ պահելու ցորեն ունենաս » , կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն : Լմէն գործքերդ այսօր տես , վասն զի վաղը ինչ արգելքներ կրնան պատահել՝ չես գիտեր . աս է որ ըսել կուտայ Հռիփարտոս Ռարեմիտն , թէ « Սէկ այսօր՝ երկու վաղը կ'արժէ » , Լը դարձեալ կ'ըսէ « Գործքեր ունիս վաղը տեսնելու , այսօր տես . թէ որ դու ծառայ մը ըլլայիր , ու տերդ զքեզ դատարկ դռնելու ըլլար , չէիր արդեօք ամբշնար : Քու տերդ դուն ես , ամբշնար զքեզ դատարկ տեսնելու » :

Թէ որ շատ բան ունիս ընելու կամ քեզի կամ քու տանդ կամ գաւառիդ համար՝ դուն բոլոր օրն ոտքի վրայ անցուր , որպէս զի չըլլայ թէ արևը վերէն զքեզ տեսնելով՝ ըսէ . ԼՏա վատին մէկը որ կը քնանայ : Քու գործածելու գործիքներդ միշտ ամանէն դուրս ու առջևդ պատրաստ ըլլան , միտքդ բերելով Հռիփարտոս Ռարեմիտն ըսածը թէ , « Թաթերը թաթպան անցուցած կատուն՝ մուկ չկրնար բռնել » :

Թերևս ընելիք շատ ունիս ու ուժդ քիչ է , երկայնամտութեամբ մէյմը գործքդ սկսէ , և կը տեսնես թէ ինչպէս առաջ կ'երթայ : « Սասն զի եր-

կար ատեն ջուրը կաթելով մեծամեծ քարեր կրնայ ծակել , և մուկն իր ճարտարութեամբն ու համբերութեամբ հաստ չուաններ կը կտրէ , և կամայ կամաց հարուածներէ՝ ահագին շղթաներ կը կտորտին » , կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն :

Կրնայ ըլլալ որ ձեզմէ ունաք ըսեն . Կարելի՛ բան է որ մարդ քիչ մ'ալ չըհանգչի : Հռիփարտոս Ռարեմիտն խօսքով , բարեկամք իմ , կ'ուզեմ ձեզի պատասխանը տալ . « Թէ որ հանգիստ կ'ուզես , կ'ըսէ , աղէկ գործածէ ժամանակդ . և որովհետեւ և ոչ վայրկեան մը ապահով ձեռքդ ունիս , նայէ որ ժամ մը չկորսնցնես : Թէ որ օգտակար գործք մը ըրիր , ժամանակին հանգիստը դտար անտարակոյս : Լս հանգիստը՝ աշխատասէր մարդուն միշտ իր ձեռքն է , իսկ ծուլին՝ ոչ երբէք » , կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն : « Գատարկութեամբ անցուցած կեանքը և վատութեամբ անցուցած կեանքը՝ երկու կեանք են » , կ'ըսէ Հռիփարտոս : Կարծես թերևս որ ծուլութեամբ աւելի հանգիստ կ'ըլլաս քան աշխատութիւնը , կը խաբուիս . Ռարեմիտն ըսածին պէս « Գատարկութենէ վիշտ կը ծնանի , և անհարկաւոր հանգրստէն՝ անհնարին ցաւ » : Կան շատ մարդիկ որ իրենց խելքին ուժովը միայն կ'ուզեն ապրիլ առանց աշխատելու , բայց կը խաբուին շահու գլուխ չունենալուն պատճառաւ , փոխանակ զի աշխատութիւնը թէ առողջութիւն թէ լիութիւն և թէ պատիւ կը բերէ մարդուս : « Գործունեայ ոստայնանկին շապիկ չի պակսիր : Հիմա որ ոչխար մը ու կով մը ունիմ ես , ամէն մարդէն բարի լոյս՝ բարի իրիկուն կը լսեմ » . կ'ըսէ Հռիփարտոս Ռարեմիտն :

Բայց աշխատասիրութիւնը միայն բաւական չէ . հասպա նաև երկայնամիտ , հաստատուն ու ժրջան ըլլալու է , անձամբ ամէն գործօրը վրայ արթուն ըլլալու , և ոչ երբէք ուրիշի ձգելու է զանոնք : Սասն զի ինչպէս Հռիփարտոս Ռարեմիտն կ'ըսէ , « Լս ոչ

երբէք տեսած եմ տունկ մը կամ ըն-  
տանիք մը որ ստէպ տեղէ տեղ փոխուե-  
լով անոնցմէ աւելի առաջ գայ որոնք  
ոչ երբէք տեղերնին կը փոփոխեն . . .  
Ու թէ՛ « Իրեք անգամ տան մը տեղէ  
տեղ փոխադրուելը՝ մէկ անգամ այրուե-  
լու չափ վնաս կուտայ . . . » Ու դարձեալ  
« Դուն խանութի պահպանն է , որ խա-  
նութի ալ զքեզ պահպանն է . . . » Դար-  
ձեալ « Թէ որ կ'ուզես որ գործքերդ  
առաջ երթան՝ անձամբ գնա տես , իսկ  
թէ որ կ'ուզես որ ետ մնան , ուրիշ մը  
խաբէ . . . » Ու թէ՛ « Ով որ արօրով  
հարբասնալ կ'ուզէ , թող մաճակալն  
ինքն ըլլայ . . . » « Տիրոջ աչքը աւելի  
գործք կը տեսնէ քան թէ իր երկու ձեռ-  
քերը . . . » « Հոգալու պահասութիւնը  
աւելի պատճառ կ'ըլլայ մեր վնասուցը՝  
քան զխութեան պահասութիւնը . . . »  
« Ով որ իր գործաւորաց վրայ չի հսկեր ,  
բաց կը թողու իր քսակն անոնց առջև .  
ուրիշ վրայ չափէ դուրս վստահանալը ,  
չատ սնէր կործանէր է . . . » « Մարդիկ  
ոչ այնքան հաւատարմով որչափ կասկա-  
ծելով յաջողէր են . . . » անձամբ իր գործ-  
քերը տեսնելը շատ շահաւոր է : « Գի-  
տութիւն ուսումնասիրին , հարստու-  
թիւն հոգածողին . . . » ինչպէս որ « Ար-  
դարութիւն քաջասրտին՝ ու երկինք ա-  
ռաքինուոյն . . . » Ուրիշ տեղ ալ կ'ըսէ  
Բարեմիտը . « Թէ որ կ'ուզես որ ա-  
ղէկ ծառայ մը ունենաս ու քեզի սիրե-  
լի ըլլայ՝ դուն քեզի ծառայէ : Արթուն  
և զգուշաւոր ըլլալու է նաև թեթև  
բաներու մէջ ալ , վասն զի պզտիկ ան-  
հոգութենէ մը երբեմն մեծամեծ չա-  
րիք կը ծագին . . . » ինչպէս կ'ըսէ ետեւէն  
նոյն Հոբարտոս , « Թէ գամ մը չըլ-  
լալուն համար՝ պայտը կորսուեր է , պայ-  
տը չըլլալուն համար՝ ձին կորսուեր է ,  
ձի չըլլալուն համար՝ հեծեալը կոր-  
սուեր է՝ թշնամեաց ձեռքն իյնալով ու  
սպաննուելով . և այս ամենայն չարեաց  
պատճառ՝ ձիուն պայտին գամ մը չի հո-  
գալն է եղեր . . . »

( ՄԱՅԱՅԻՆ ԴՐՈՒՄ ԵՄԵՍ )

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԻՆՈՒՆ :

ՍԵՐՁԻՆ դարերուս դիւցազներգակ  
բանաստեղծներուն մէջ երևելիներէն  
մէկն է Յովհաննէս Սիլվան անգղիա-  
ցի բանաստեղծն , որ իրեն Պարտիս  
Բարտիս<sup>1</sup> ըսուած դիւցազնական բանա-  
ստեղծութեամբը Հոմերոսի ու Սիլ-  
վիոսի կարգն անցաւ , և Միգրիսցոյ  
աղբին ու մատենագրութեանը անմահ  
պարծանք եղաւ :

Նաև Սիլվան կամ Սիլվըն Սոն-  
տրա 1608<sup>ն</sup> ազնուական տնէ , և պզտի-  
կուց սկսաւ մեծ սէր ձգել ուսմանց . ցո-  
րեկները կարգալէն չկշտանալով ին-  
չուան կէս գիշեր ալ կը նստէր , որով  
ոչ միայն առողջութիւնը կորսնցուց ,  
հապա նաև վերջերը երկու աչքն ալ  
կուրցան : Տասնութ թարեկան ան-  
գղիերէն ու լատիներէն ընտիր ոտանա-  
ւորներ կը շինէր . երբոր մայրը մեռաւ ,  
հորը հրամանաւը Աբրոպա պտրտելու  
եղաւ , և խտալիա ալ գալով աղէկ ի-  
տալերէն սորվեցաւ և Տանթէ , Փե-  
թրալքայ ու Արիսոպոյ իտալացի երևե-  
լի բանաստեղծներուն աղէկ հատուած-  
ները անգղիերէն թարգմանեց : Սո-  
զէր Յունաստան ալ երթալ , բայց նոյն  
միջոցին Միգրիս խռովութիւն ելլելով՝  
ստիպուեցաւ ետ դառնալու , և ինքն  
ալ զէնքի տեղ գրիչը ձեռք առած սկը-  
սաւ թագաւորական և եպիսկոպոսա-  
կան իշխանութեանց դէմ գրել . վասն  
զի ինքը աղանդով Արիցական կամ  
Սաբրական<sup>2</sup> ըլլալով իշխանութեանց

1 Անգլ . Paradise lost.

2 Երիցական ( Անգլ . Presbyterian ) կ'ըսուին  
Անգղիոյ ան աղանդաւորները որ եկեղեցոյ դա-  
սակարգութիւնները կը մերժեն , ըսելով թէ Քրիս-  
տոսի եկեղեցին առջի իրեք դարերուն մէջ քա-  
հաններէ և կամ երիցագոյններէ միայն կը կա-  
ռավարուէր . հիմայ ալ ամէն քահանայ հաւասա-  
րապէս կրնայ կառավարել : Աս աղանդս հարեց